ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՇՀԱՊՁԲ-15/10 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/08)» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

ք.Դիլիջան

«11» «մայիս» 2016թ.
ժամը 11 00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝
Հ.Հարությունյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ**

Հանձնաժողովի անդամներ՝
Լ.Աբազյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի իրավաբան**

Գ. Վարդանյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ավտոմեխանիկ,**

Հանձնաժողովի քարտուղար՝
Ա. Դիլանյան — **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գնումների մասնագետ-տնտեսագետ**

1. **«ՇՀԱՊՁԲ-15/10 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/08)» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման, գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի գնային առաջարկների արդյունքների ամփոփման) մասին.**

1.1. Գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվել են **«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ Ք. Դիլիջան Թբիլիսյան խճուղի 2 հասցեում:**

1.2. **Գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը**

Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Հեռախոսահամարը
«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ	ք. Երևան, Դրոյի 8/4	+374 94 95 49 95

1.3. **Գնային առաջարկներ ներկայացրած այլ մասնակիցներ չկան**

1.4. **Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.**

1.4.1. «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.5. **Տվյալներ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

1.5.1. «ՇՀԱՊՁԲ-15/10(ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/08)» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման հրավերով սահմանված «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն փակ կնքված ծրարով ներկայացրել էր ընթացակարգին մասնակցելու դիմում, հայտարարություն ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին, մասնագիտական փորձառության, տեխնիկական միջոցների, ֆինասական միջոցների և աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարություն, գնային առաջարկ, հայտարարություն առաջարկվող ապրանքների հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ և հայտարարություն եվրասիական տնտեսական միության անդամ երկրների ապրանքներ մատակարարելու վերաբերյալ: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, բնօրինակ փաթեթում ներառված բոլոր պատճեն հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցի կողմից:

1.6. **Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

1.6.1. «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից մրցույթի գնային առաջարկի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

1.7. **Մասնակիցների առաջարկած գները՝**

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը/տառերով և թվերով/
1	Արտահագուստ /տղամարդու ամառային և ձմեռային/	2,196,600	43,200	-	2,239,800 /երկու միլիոն երկու հարյուր երեսունինը հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ
2	Արտահագուստ /կանացի ամառային/	343,930	6,020	-	349,950 /երեք հարյուր քառասունինը հազար ինը հարյուր հիսուն/ ՀՀ դրամ
3	Արտահագուստ /տղամարդու ամառային և ձմեռային/	373,705	6,270	-	379,975 /երեք հարյուր յոթանասունինը հազար ինը հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ

1.7.1. «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքի հաշվարկում թվաբանական անճշտություններ չկան:

1.8. **Հանձնաժողովը որոշեց՝**

1.8.1. «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը գնահատել բավարար:

1.8.2. Ուղարկել հարցում ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ «ՇՀԱՊՁԲ-15/10 (ԴԱՊ-ՇՀԱՊՁԲ-16/08)» ծածկագրով մրցույթի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով բավարար գնահատված «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

1.8.3. Ծանուցել մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.9. **Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:**

Հանձնաժողովի նախագահ՝

Հ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝

Լ.Աբազյան

Գ.Վարդանյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Դիլանյան